

րով որմ՝ մը կը շրջապատէ, եւ այս պատճառաւ հին ատեններ իբրեւ բերդ կը նկատուէր ⁸⁵:

Եկեղեցւոյն դէպ ի Սբէյա գիւղն դարձած կողմը՝ եկեղեցւոյ ձեւով երկայն աշտարակով մ'ամրացեալ է: Այս աշտարակին տակն կոփածոյ մեծամեծ քարամբք շինուած է կամարաձեւ գուռն, որուն երկու կողմն կամարաձեւ բնակելի խցիկներ կան, իսկ (առաջին) դաստիկոնին վրայ կայ փոքրիկ եկեղեցի մը, որուն խորանակամարին վրայ մինչեւ ցայսօր Ս. Աստուածածնի պատկեր մը յայտնի կ'երեւայ. կայ նաեւ բնակեալ երկու խցիկ, ուր հրացան եւ թնդանօթ արձակելու եւ դիտելու որմածակեր կան:

Գաստիկոնին մէջ, ինչպէս գաւթին կողմը պատերուն վրայ յեցած քարեղէն նեցուկներէն կ'երեւայ, այս շէնքին ներքին երեք կողմերն անցք մը կար, ուր կարելի էր մանել նոյն տեղն եղող խցիկներէն՝ անցնելով փոքրիկ տնակի մը եւ դրան մը մէջէն, որ այսօր պատով հիւսուած է:

Գէպ ի Սուչավա նայող կողմը շրջապատող որմոյն վրայ մեծագոյն աշտարակ մը կայ, (որ հիմայ զանգակատուն է,) որուն տակն է գուռ մը՝ այժմ՝ պատով հիւսուած, քաղաքին կողմանէ եկողներուն համար: Այս կամարաձեւ դրան վերին ծաղկանկար քանդակեալ քարին միջավայրն կայ թուական մ'արձանագրեալ, որ կարմրագոյն թուերով «1606» հիմնադրութեան տարին կը ծանուցանէ: Գրան կամարին վրայ կայ տեսակ մը մատուռ կամ խորան, ուր կը մտցուի աշտարակին քովն շինուած խղիւրն-